




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՐԳԵՅԻՆ, ԲԵՆԸՄԻՐԵԿԸՆ, ԴԲԵԴԻՏԵԿԸՆ  
ԵՒ ԴԵՂԵԲԵԿԸՆ

ՀՈՐԸՈՐԴ ՏԱՐԻ  
ՇԼՅԱՆ ՄԻԸՄԵԸՅ




ՅԵՐՈՒՍԸՂԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1869

Ամեն . Տ . Տ . ՄԿՐՏԻ Սրբազան Պատրիարք :  
 Գեր . Արիստակէս Եպիսկոպոս :  
 " Թադէոս Սրբազան Առաջնորդ Թեքերատաղի :  
 " Եովաննէս Եպիսկոպոս Սեփեան :  
 " Խորեն Եպիսկոպոս Նարապէական :  
 " Արաշամ Եպիսկոպոս :  
 Արժ . Փիլիպպոս վար . փոխ . Երուսաղէմական :  
 " Բարթոլոմէոս վարդապետ Պէշիկմաշու :  
 " Գարեգին վարդապետ Թաթարեան :  
 " Կարապետ վարդապետ Պատրիարքական փոխանորդ . ( Չ օրինակ ) :  
 " Յակոբ վարդապետ Եւգոնիոյ :  
 " Եովաննէս վարդապետ Ղալաթիոյ :  
 Տ . Գրիգոր քահանայ Պէշիկմաշու :  
 Տ . Սուքիաս քահ . Մայր եկեղեցւոյ առաջ լուսարար :  
 Աւելանն մանտեօի Եովաննէս աղա :  
 Աղանտեան Մկրտիչ և Կարապետ աղայք :  
 Աշնանեան Պօղոս էֆէնտի :  
 Աւրօ Սահակ էֆէնտի :  
 Աւարեանց Մարգար և Մարտիրոս աղայք :  
 Արայանն մանտեօի Մարգիս աղա :  
 Արթիւնաթ Աստեռ աղա :  
 Արշանեան Ստեփան Պէյ :  
 Բարաղամեան Եփեսոսի աղա :  
 Բարսեղեան Ստեփան աղա :  
 Գարբրիէլեան Մկրտիչ աղա :  
 Գալապաճեան Ճանիկ աղա :  
 Գալուստեան Ղալարոս աղա :  
 Գալսեղեան Յարութիւն աղա :  
 Գալարաճեան մանտեօի Գաբրիէլ աղա :  
 Գարակէօբեան Եովաննէս աղա :  
 Գարակէօբեան Միքայէլ աղա :  
 Գալարաճեան Գէորգ աղա . ( Չ օրի . ) :  
 Գալարաճեան Յարութիւն աղա :  
 Գալարաճեան Կապալէթ աղա :  
 Գալարաճեան Համբարձում աղա :  
 Գալաթեան Եփեսոսի աղա :  
 Գրիգորեան Սիմոնիկ աղա :  
 Երազման Աւետիս աղա :  
 Երուսղեան Պօղոս աղա :  
 Երաման Գէորգ Պէյ . ( Չ օրի . ) :  
 Երանանց վարժուհի Սեդուկեան :  
 Երջումեան Կարապետ աղա . ( Չ օրի . ) :  
 Զարգարեան Գէորգ աղա Կեսարացի :  
 Էմանուէլեան Գալուստ աղա :  
 Թադէորեան մանտեօի Բուքեն աղա :  
 Թադէորեան Վրժանէս աղա Ժամադարձ :  
 Թաւշի որաշի Եպրութիւնեան Աւարէլ աղա :  
 Թաւշի որաշի Վարդանեան Տաթար աղա :  
 Թիփուքիեան Կարապետ աղա :  
 Ի յիստորիկեան Առաքա աղա :  
 Խորապետեան Ստեփան աղա :  
 Իւսիմանեան Կարապետ աղա :  
 Իւղարեան Կապալէթ աղա :  
 Խաչատուրեան Գ . մանտեօի Գաբրիէլ աղա :  
 Խաչատուրեան Մկրտիչ աղա :  
 Խաղբերցի Եպրութիւն աղա Սամուէլեան :  
 Կանդեան Եփեսոսի Արշէլ աղա :  
 Կիւրղենիեան մանտեօի Կիւրղենի աղա :  
 Կիւրղենիեան Կիւրղենի աղա Կեսարացի :  
 Կիւրղենիեան մանտեօի Մարգիս աղա :  
 Կիւմիւլեան Համբարձում աղա Կեսարացի :  
 Կիւմիւլեան Եովաննէս աղա :  
 Կիւրճեան Սահակ աղա :  
 Հանեան Խիչնտէր աղա :  
 Համամանեան Մարգիս էֆէնտի :  
 Հարենց Եօհանն աղա :  
 Հարենց մանտեօի Արաշամ աղա :  
 Հիւրեմար պէշիկմաշու Ստեփան էֆէնտի :  
 Դաւաթուրեան մանտեօի Խաչիկ աղա :  
 Դաւաթուրեան Բիւրաղատուր աղա :

Դաւաթուրեան Սահակ աղա :  
 Մաղաւթեան մանտեօի Մարգիս աղա :  
 Մաղաւթեան մանտեօի Մարգիս Խաչիւն :  
 Մանուկեան Մանուկ աղա :  
 Մանուկեան Եփեսոսի աղա :  
 Մանուկեան Սեմեդեօր աղա :  
 Միլիթարեան Միաբանութիւն 'ի Վենետիկ :  
 Միլիթարեան Միաբանութիւն 'ի Վիեննա :  
 Միաբանեան Խաչատուր աղա :  
 Միաբանեան Վարդապետ աղա :  
 Միլիթարեան Սամուէլ աղա :  
 Միւսաղանձեան Մանուկ աղա . ( Չ օրինակ ) :  
 Մոսիկեան Եփեսոս աղա :  
 Մոլդեան աղա աղաւանդի Աճեմեան Վանեցի :  
 Մուրատեան Գէորգ աղա :  
 Յակոբեան Պօղոս աղա :  
 Յովսէփեան Կարապետ աղա :  
 Նաթանեան մանտեօի Համբարձում աղա :  
 Նիքոնեան Գրիգոր աղա :  
 Նիկոլատեան Պետրոս աղա :  
 Նորատունիեան մանտեօի Գրիգոր աղա . ( Չ օրի . ) :  
 Նորատունիեան Եփեսոսի . ( Չ օրի . ) :  
 Նորատունիեան Սիմոնիկ աղա . ( Չ օրի . ) :  
 Հահաւէտեանց ընկերութիւն Միաբանաց :  
 Համամանեան Աւետիս աղա :  
 Ոսիքիչ Մարգիս աղա :  
 Չաթերթիւնեան Գրիգոր աղա :  
 Չաթեան Պապատար աղա Բիսկեանցի :  
 Չաթեան Մկրտիչ աղա Բիսկեանցի :  
 Չարանեան Մարգիս աղա :  
 Չարաբեան Միւլէոն աղա Արապիւնցի :  
 Չօրաբեան Մանուկ աղա :  
 Չօրաբեան Ղալարոս աղա :  
 Պալեան Մարգիս Պէյ :  
 Պալեան Անտոնիկ Պէյ :  
 Պալեան Յակոբ Պէյ :  
 Պալապեան մանտեօի Խաչատուր աղա :  
 Պարտիպալանեան Աւետիս աղա :  
 Պէշիկմաշու Խորոյկ Պէյ :  
 Պէրպէրեան Մարգիս աղա :  
 Պէշիկմաշու Մկրտիչ աղա :  
 Պէշիկմաշու Գէորգ աղա :  
 Պոյնիկեան Մարգիս աղա :  
 Պոյնիկեան Սիմոն աղա :  
 Սաղաթեան Աւետիս աղա . ( Չ օրինակ ) :  
 Սանուց ընկերութիւն Եփեսոս :  
 Սարաֆ Եփեսոս աղա :  
 Սեփեան Տաթար էֆէնտի :  
 Սեփեան Եպրութիւն աղա :  
 Սեփեան Կանն էֆէնտի :  
 Սիւստեան Եպրութիւն աղա :  
 Սուրբապետեան Կիւրղեան աղա :  
 Սուրբապետեան Կարապետ և Բարսեղ աղայք :  
 Ստանիսլաւեան մանտեօի Մկրտիչ աղա :  
 Վարդանեան Արաշամ աղա :  
 Վարդապետեան Գրիգոր աղա :  
 Տամուլեան Եփեսոս աղա :  
 Տամուլեան Արաշամ աղա :  
 Տատեան Ե . Աւարէլ էֆէնտի :  
 Տատեան Պ . Աւարէլ էֆէնտի :  
 Տատեան Պ . Մկրտիչ Պէյ :  
 Տատեան Եփեսոսի Պէյ :  
 Տատեան Ե . Նիքոն էֆէնտի :  
 Տատեան Պ . Կանն օրիպա :  
 Տատեան Պ . Սիմոն Պէյ :  
 Տէրպիւնց պատուելի Եփեսոսի աղա :  
 Տօղտաման որաշի մանտեօի Գաբրիէլ աղա Քէլեան :  
 Տօնեան Եփեսոսի Եֆէնտի :  
 Բիւրիտեան Մկրտիչ Պէյ . ( Չ օրի . ) :  
 Բիւրիտեան որաշի մանտեօի Մկրտիչ աղա :  
 Ժամատեան Գէորգ աղա :  
 Ժամատեան Գէորգ էֆէնտի . ( Չ օրի . ) :



# Մ Ի Մ Ն

ՀԱՅԿԱՅԻՆ ՏԱՐԻ  
ԹԻՒՆ 10.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀԱՅԿԱՅԻՆ ԶԵՆ  
1869.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՄԵՆԱՊՍՏԻ ԶՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՕԼՍԱՅ  
ՏԵՐ ՍԿՐՏԻՉ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱԶԳԱՅԻՆ լրագիրներն արդէն աւետիկային Սրբապան Պատրիարքի ընտրութիւնն և Նիկիոյիցիներն սկսան յիշատակել ժամերգութեանց մէջ նախ անուանն : Դատ Պատրիարքաց ընտրութիւն աւետուած և անուան յիշատակուած և ապա դադրած են . վասն զի այս ամեիք անցաւ որ երեւոյթիւնք են պատրիարքական կոչման մէջ Բայց կայ երեւոյթ մի որ անանց է , կայ յիշատակութիւն մի որ տեւական է : Այս է պատմութեան յիշատակութիւնը , որով ոմանց արարքները օրհնութեամբ կը յիշատակուին և ոմանքը անխիճք : Պատմութեան մէջ որ ժանաւոր տեղ գրաւելու և ռպագայ սերունդի օրհնութիւնը ժառանգե-

լու համար հարկաւոր է գործ , բարի գործ և մեծ գործ : Սեճ փորձով է որ մարդ կը մեծնայ և բարի գործով է որ կ'օրհնուի դարուց 'Թ դարա : Սեճ գործերը աւելի մեծ պաշտօններու մէջ կը գործուին , ինչպէս և մեծամեծ հանգէսները աւելի ընդարձակ առօրեայիցներու մէջ կը կատարուին :

Արդ՝ պատրիարքութիւնը մեծ պաշտօն է և արձակ ասպարէզ մեծաւ գործութեան , և ահա՛ այս մեծ պաշտօնին կը կոչուի Ամենապատիւ Սրբապետ Սրբապան Պատրիարքը : Սեճ պաշտօնները նման են բարձր լեռներու : Ի երանց բարձունքէն աւելի գիւրութիւն կը դիտուին երկնափամբը և երկրագունդը , և մեծ պաշտօն-

մանց գահայքէն աւելի կը զննուին և կը տեսնուին Վստուծոյ կամբը երկնքի մէջ և ժողովրդեան վէրքերը՝ երկրի վրայ։ Սորա համար է որ ժողովուրդը մարդիկ կ'ընտրէ և կը բարձրացնէ։ Սակայն դիտելու համար կուրովաբիւ աչք պէտք է, և զննելու ու տեսնելու համար՝ մաքուր սիրտ և իմաստուն միտք։ Երանց վրայ երբեմն ամպեր կը կուտակին, մեծ պաշտօններու մէջ եւս կարծիքներ կը յուզին և խռովութիւններ կը յաճախեն. բայց թէ՛ ամպերը և թէ՛ խռովութիւնները տեւական չեն. ուստի և ամենուն գիմադրաւելու համար՝ հաստատուն կամք պէտք է. Հետեւապէս, մաքուր սիրտ, իմաստուն միտք և հաստատուն կամք ամեն մեծ պաշտօնաւորներու մեծագործութեան միակ պայմաններն են և հաւատարիմ աթոռակիցները։ Եթէ չը կան այս պայմանները, թշուառ են մեծ պաշտօնաւորները. վասն զի, ինչպէս որ կը բարձրանան նոյնպէս և շուտով կ'անկանին։ Սորա համար է, որ մեծահաւ ճար Եղիշէն կը վճռէ համարձակ. «Թագաւոր որ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ 'ի վիճակին իւրում՝ հաստատուն գտնաւ։ Եւ տարակոյս չը կայ, որ այս նշանաւոր խօսքը ամեն մեծ պաշտօնաւորներու կը պատկանի։

Սեծ պաշտօնաւորաց աթոռակիցները, բացի իրենց մաքուր սրտէն, իմաստուն մտքէն և հաստատուն կամքէն, են նոյնպէս և իրենց խորհրդակիցները. ըստ որում պաշտօնաւոր մի ինքն ըստ ինքեան որչափ որ կատարեալ, դարձեալ անգոր է առանց օրինաւոր գործակիցաց։ Երբեմն մեծագործութեան մի անհրաժեշտ պայմանըն եւս խորհրդակցութիւնն է և գործակցութիւնը։

Մենապատիւ Իրիմեան Ժողովրդագետէր Հայրը այսօր պատրիարքական աթոռ կը բարձրանայ. բայց նոյն նրա իրական պաշտօնը օրինաւորապէս վարելու համար միայն իւր անձնական արժանաւորութիւններն բուական չեն, այլ հարկաւ որ են անշուշտ աթոռակիցներ և գործակիցներ։ Այլ են այս գործակիցները՝ եթէ ոչ սահմանադրական Ժողովները։ Երբ Մենապատիւ Հօր առաջին գործը հարկ է ուրեմն որ լինի սահմանադրական Ժողովներու վերահաստատութիւն՝ աւրի զի, ընդհանուր գործ մի երբոր ընդհանուրի աջակցութեամբ կը գործաթ միշտ տեւական է և անապաշտ։ Բայց մի Պատրիարքներ անկոյուն վիճակ ունեցան, որովհետեւ չը կամեցան օգուտ քաղել սահմանադրական Ժողովներէն։ Երբանիկ պիտի լինի Երբոր Պատրիարքը եթէ ջանայ իւր աթոռակիցները կանանաւորել, իւր հաւաքական գործութիւնը բազմապատկել եւ այնպէս գործել։ Երբոր Հայրը մեղմէն աւելի բաջ գիտէ, որ նոյն օրէն սկսան կաթողիկոսական խնդիրը ծանրանալ, գաւառական գործերը երեսի վրայ մնալ և ազգային վարչութեան վիճակը վատթարիլ, երբոր պատրիարքութեան գործակից Ժողովները պղտորեցան և խանգարեցան, երբոր փոխանակ պատրիարքութիւնն զժողովուրդն 'ի գործ հրաւիրելու, ժողովուրդն սկսաւ զպատրիարքութիւնն 'ի գործ հրաւիրել, Հետեւեալէս, որչափ արդեօք պիտի թեւ թեւնայ պատրիարքութեան բեռն, երբ ինքն սկսի զժողովուրդն 'ի գործ հրաւիրել. եւ որչափ մեծ արժանաւորութիւն է ժողովրդի ընտրած պաշտօնաւորին համար, երբ ոչ թէ միայն ինքը կը գործէ, այլ և գործել կը տալ և այսպէս ընդհանրութիւնը գործու-

նէութեան ճանադարհի մէջ կը մըռնէ և Վարձեւ և գործել տալ յառաջ երթալ և իւր հետ տանիլ, այս է ահա հաւարական յառաջադիմութեան ապահով և անմիջապէս օրէնքը, որուն գէմ յորդ խիստ շատ անգամ վեր պանքերի գործուեցան: Այսին դէպք, այս եւս պիտի խոստովանինք տեսչառապէս, որ մեր ժողովուրդը տեսակ մի աւանդական թիւր սովորութիւն ունի. Աթոքիկա կ'ընտրէ, Պատրիարք կ'ընտրէ, առաջնորդ կ'ընտրէ, ժողովական կ'ընտրէ և անգործունէութիւն միայն հեռուէն հանդիսատես կը լինի, Բողոքեան ընտրութեան մէջ միայն շահ նկատելով և մոռնակցելով, և ոչ թէ գործակցութեան: Ինտրել և մերժել, բարձրացուցանել և իջուցանել, այս է գործադրարար մեր ժողովուրդի գլխաւոր գործունէութիւնը:

Այսին ալ ազգայնապէս տաշտոնաւորները, որոնք իրենց օրինակաւ և իրենց հետ պիտի վառեն միանգամայն և ժողովուրդի գործադրութեան ետանդը, այնպիսի պատշտոնաւորները խիստ արժանաւոր անդ պիտի գրաւեն ազգային պատմութեան մէջ:

Ի՞նչ մեր Վանապատիւ Դորրեալի Պատրիարքի վարդապետական շրջանի պատմութեան առաջին հատորը գրուած է արդէն յուսովի տառերով, մալթերը ուլեմն որ պատրիարքական շրջանի երկրորդ հատորն եւս լրուան և պակ լինի աւաջնոյն:

## ԳՈՒՑՏՆԵՐԵՐԳ

Հովհաննէս Գուտտենբերգի աշունք աշխարհածանօթ է. Գուտտենբերգը տպագրութեան հնարիչն եւ հեղինակն է: Թէպէտ և ոմանք ժրտեցին այս փառքը Գուտտենբերգին տալու, ժամանակակից գրեանց մէջ նորա անունը չը տեսնելով, սակայն Սայնց և Սորաբուրգ քաղաքները, տպագրութեան հրաշալի արուեստի այս նշանաւոր խանձարուրները, արձաններ կանգնեցին Գուտտենբերգի համար, և Հովհաննէս Սորաբուրգի տունը խրատութեան օրը տպագրութեան գիւտի հարիւրամեակները և յոբելեանները կատարելով յայտնապէս հաւատեցին, որ իրենք ամենեւին չեն ընդունիր Գուտտենբերգի վրայ եղած տարակուսանքները և չեն ներքոր աղալտուի միայն հոշակաւոր զաւակի՝ և միւսոյն փառաւոր հիւրի աշունք: Սայնցի մէջ կանգնած արձանը թորովալցան անուանի բանդակաւ գործի տուած կաղապարն է, իսկ Վարսաբուրգի արձանը՝ Կալթ գլխով ժերի, որոյ օրինակը կը գտնուի նմանապէս Փարիզի կոթերական տպարանին մէջ:

Սայնց և Սորաբուրգ քաղաքները իրաւունք ունին և լիթ Գուտտենբերգի անունը չիւրելի իւր տպագրած գրքերու մէջ, սորա պատճառն այն է, որ նա ինչը չէ կամեցեր իւր տոհմի անունը լաւ հրատարակած մատենաներու մէջ նշանակել: Հատ եւ շատ ապույժ ջիւր կան, որոնք տպագրութեան գիւտի իրաւունքը և փառքը Գուտտենբերգին կ'ընծայեն:

Ի՞նչ Գուտտենբերգ, որ աշունք կան յեղէ էր և ծնած էր Սայնցի մէջ 1395 ին, եկաւ 1424 ին Սորաբուրգ, խաւսափելով այն աղմուկներէն որով



Վրաց Թերեքի հայրենակցաց ջոկերու  
կրտսէիւնը երկար չը տեսնէր քայքայ  
տարեգրութիւնները ջեն յիշատա  
կեր քառանասն արտաձառն : Գուռ  
տենքերը տարարան հիմնեց Սայնցի  
մէջ մի հոգաբարձուի առանձնակու  
թեանը, և այս է այն երկու տարարան  
ներէն մէկը : որ կային Գուռտենքեր  
գի մահաւան ժամանակ , 1468 ին ,  
Գուռտենքերը 1465 ին յատարի (գըսու  
թիւն Գերմանական դաշնակցութեան  
մէջ) Գուռտի աշխուական տնտեսուն ըս  
տացաւ : Վրաց այս է Գուռտենքերի  
կենաց վրայ եղած բոլոր տեղեկու  
թիւնը :

Սայնցի տարարանէն յառաջ Գուռտենքեր  
Գերմանական շատկներէն Ստաւաթ  
շուշ : որ կը կոչուի յառաջան երկու  
Գուռտի : ըստ որում իւրաքանչիւր էջ  
գըստը կը արարուեալէ խիստ իրաւացի  
է օրինակ որ էր , որ տղաբախան նոր  
գիւրդ իւր առաջնապաշտը նուիրէր  
ի փոռս Ստաւաթշուշին , որ աշխար  
հի տուն գրքերէն գերազանցն է , պա  
րուանկերով իւր մէջ Ստաւաթ կամայ  
քոյսանութիւնը , որուն չէ կարող էր  
բէր հաւաքարի մարդկային հանձնար

Տպագրութիւնը խիստ արագ տպ  
րածուեցաւ : Գերմանացի մէջ , վասն զի  
այդ ժամանակ խառնութիւն ապագ  
եցաւ Սայնցի մէջ և շատ գործաւոր  
ներ տեսան գաղթել քանազան կողմեր  
և իրենց Գաղթականութեան նպատակին  
տպագրութեան նաւալմանը : Գուռ  
տենքերի գիւտէն 25 տարի յետոյ  
համարեալ թէ բոլոր Վրացայի մէջտը  
տարարաններ կը գտնուէին իրաւացի մէջ  
առաջին տպագրական գործատուներ  
հաստատուեցաւ Ստաւաթ վանքին  
մէջ , և տակաւ ժամանակէն յետոյ  
(1467) մի տպարան եւս հաստատու  
եցաւ Ղուրմի մէջ : Այնուհետեւ Վրաց  
պոլս , և Սիկիւս եւս տպարաններ

հաստատուեցան : ինչպէս և Սպանիա  
տպարան մի 1460 ին :

Տպագրութիւնը ամեն երկրներ  
ըստ մէջ մի և նոյն եռանդով և զգաց  
մունքով շնորհաւորեցաւ : Վրացի  
մէջ յարկի մասկաւարաններ (գու  
տաւարներ) մեթեքին տպագրութիւ  
նը անգործ և փանգամայն ճատկար հա  
մարելով : Վրացի մէջ տպագրութիւ  
նը խիստ կանուխ մուտ գործեց , բայց  
տպագրութեան քաղցրերու հանդիպեցաւ :  
Տպագրութեան առաջին մուծանոցը  
Փորթի մէջ եղաւ Սորբոնի համալսա  
րանի աւագ անդամներէն մէկը , որ  
նոյն իսկ Սորբոնի մէջ տպագրական ա  
ռաջին գործատուներ հաստատուեց : Սոր  
ԺԱԳ բարաբարի պաշտպանեց տը  
տպագրութեան նոր արուեստը , և այս  
մուծարական հար մանգլիտի տա  
րածմանը նպատակեց իւր լուր թագա  
ւորութեան մէջ : Սոր ԺԲ գ ջանի  
մի քալ աւելի յառաջեց և տպագրիւ  
ններու արքունի հրովարտակներ տա  
ւ : որոյ մէջ Գուռտենքերի գիւ  
տը անուանուած էր , « Վրաց Գրիկ  
ապագան , որով Գրիկն է ամեն գեղ  
բայականութիւնը և իրենց ծաղիկներ  
պանել » : Իսկ ընդհանուրակն Վրաց  
սուս և խիստ շարաշար վարուեցաւ  
տպագրութեան գէտ : Տպագրի կայ  
նորս մի հրովարտակը , 1535 ին գրու  
ած , որով բացարձակապէս կ'արդէն  
տպագրութիւնը Վրացի մէջ և իսկ  
հնազանդ գտնուողներուն համար պա  
տիմ կը սահմանէ կախազանք : Վրաց  
գաժողովը շատ խիստ համարեց այս  
պատիժը և յայտարարութիւն ըրաւ  
թագաւորին , որ անհնարին է արդէ  
լու Վրացի մէջ այն արուեստը , որ  
բոլոր Վրացայի մէջ տարածուած է ,  
յիշեցուց նոյնպէս թէ՛ մեծ օգուտ  
ներ կարող են յառաջ պաշտպագրու  
թեանէն , եթէ ծաղկի Վրացի մէջ :

Թագաւորը մասամբ ընդունեց Մու-  
գաժողովի յուշարարական դիտադու-  
թիւնը և մեզիկ տրգելման առաջին  
հրամանը : Տպագրութեան ուրտօնու-  
թիւնը իբրեւ մեկազմառութիւն  
միայն արքունի կոռ.ալիարութեանը վե-  
րադասեց : Մյս երկրորդ հրովարտու-  
կաւ որոշուած էին 24 արտօնաւոր և  
երթաշաւարտած տպագրիչներ, և առ-  
քա միայն ունէին տպագրելու իրա-  
ւունք, և տակոյն ամեն երկուսորու-  
թիւն առանց հրամանի չէին կարող  
տպագրել : Մյս տեղէն կ'երեւի ահա  
որ տպագրութեան հրամանագիրները  
նոր օրէնագրութեան արգելք չեն,  
այլ մինչեւ յըրանսուա Ախի՛ թագաւո-  
րութեան օրերը կը հասնին :

Լըբոյր դիտադութեան տունուք  
այն ամեն տարբեր և հակառակ կար-  
ծիքները, որոնք պատահեցան տպագ-  
րութեան նոր ծնունդ առած ժամու-  
նակ՝ իսկզբան կը զարմանանք : Բայց  
երբոր աւելի խորամուխ կը լինին,  
իսկոյն կը լուծուի այս պատմական  
խնդիրը : Ըստ փքեան, արդարեւ, տը-  
պագրութիւնը մի մուտ. արական հզօր  
մեքենայ է, որ կը բազմապատկէ կարող-  
ղութիւնը և կը հանրացնէ : Եթէ մուտ-  
ծութիւնը կամ խորհուրդը բարի, ար-  
դար, ճշմարիտ, կրօնական և բարոյա-  
կան է, հետեւապէս հանրացնելն ևս  
մեծ ծառայութիւն է մարդկութեան :  
Իսկ եթէ մուտծութիւնը վատ, սուտ,  
անիրաւ, խաբեբայ, անկրօն և անբա-  
րոյական է, հետեւապէս հանրացնելն  
եւս մեծ վտանգ է և անհնարին թըշ-  
ուառութիւն : Եւ ուր ծեղ իրաւունք  
ունէր ուրեմն Վուտանքերգի գիւ-  
սքը շնորհաւորել իբրեւ բարեգործու-  
թիւն, որովհետեւ կը տեսնէր որ  
տպագրութիւնը մի հզօր միջնորդ է,  
որ կարող է նպաստել կրօնի, գիտու-  
թեան և ամեն ճշմարտութեանց առ-

բածմանը : Երանսուա Ա. որ կը տեղ-  
նէր թէ իրեն շուրջ յանգուզն նորու-  
թիւններ երեւան կը գային, որով ՚ի  
հիմանց կը յուզուէր քրիստոնէական  
ընկերութիւնը, Երանսուան եւս ի  
րաւունք ունէր կասկածելու, որ մի  
գուցէ մարգիկ տպագրութիւնը ի-  
րենց չոր կիրքերուն և խորհուրդնե-  
րուն գործիք չլինեն :

Ինչ որ է շուրջին նիւթական աշ-  
խարհի մէջ, նոյն է մամուլը և տպագ-  
րութիւնը մուտ. արական և բարոյա-  
կան աշխարհի մէջ : Ինչ որ ասուած է  
լեզուի համար, որով կարելի է օրհ-  
նել և անխժանել, նոյնը կարող ենք ա-  
սել և տպագրութեան համար : Տը-  
պագրութիւնը սուրբ է և անսուրբ,  
մաքրիչ է եւ պղտորիչ, կը կրթէ և  
կը խաբէր և կը սրբէ և կ'արատաւորէ,  
կ'առաջնորդէ և կը մեղրեցնէ, կը փրկ-  
կէ և կը կորուսանէ, կը լուսաւորէ և  
կը մթապնէ, կը խաղաղէ և կը գրգռէ,  
կը գործէ թէ բարի և թէ չար : Օրինա-  
կաւ բացատրենք այս ներհակ ասացու-  
ածները : Մհա Վուտանքերգի գաւած  
շտրժական ստուերը տպագրանիւրկղե-  
րու մէջ կը հանգչին. սուէք գրաշար-  
ներուն Վեհաարունի օրինակ մի և ա-  
հա արկղներէն կ'ենն Վեհաարան :  
Տուները, որով Վեհաարանը տպա-  
գրութեցաւ և կը ցրուին արկղներուն  
մէջ, շտտ ժամանակէն յետոյ՝ կը  
գայ Ուրնան իւր երկասիրութիւննե-  
րով և ահա կ'անի յետոյ և ստապի-  
լիաւան զարմովիւն Մապիւր կ'ենն  
այն արկղներէն, ուստի ելած էր Վե-  
հաարան : Եւ նոյն տուները կամ գը-  
րերը գործ գրութեան թէ հատուտու-  
թեւ և թէ հերքման, թէ պատմութեան  
և թէ առասպելախառն վիպասանու-  
թեան, թէ ճշմարտութեան և թէ  
ստուութեան համար :

Մհա տպագրութիւն :

Թէ Գրանտուան և Թէ իր ամեն հետևողները, որոնք տպագրութեան թռիչներուն դիմագրեցին, շատ ուր խաղեցան, վասն զի չը կարացին իմանալ որ անհնարին է դիմագրել նոր պիւսին, որոյ ծաւալման ժամը հասած է ։ Պէտք է ընթանալ աշխարհի հետ, որ կ'ընթանայ, պէտք է իջարին դուրս գնել այն գէնքերը, որ չարք կ'աւելնեն սեպհականիւ ։ պէտք է անդու դար պատերազմիլ ճշմարտութեան և արդարութեան համար ։ պէտք է խաւարի դէմ լըս տարածել և ազազակիլ ինչպէս հրեշտակապետը պատերազմելով ի սահմանիս<sup>(\*)</sup> հետ կ'ազազակէր<sup>(\*)</sup> Լէ նման քեզ, լ'ստուած Դ ։

Վուտտենբերգի վրայ զարմացողները տուած են նորան այս նշանաբանը, « Լըլիլ լըս Դ, սակայն խիստ չափազանց է և փառասիրական այս պատուադրումը Վասն զի միայն լ'ստուած Դ

(\*) Լափֆլը կը նշանակէ լուսակիր ։ Բանաստեղծները այս անունը կը տային առաւօտեան տաղին կամ Արուսեակին, հեթանոսները նոյն անունով աստուած մի կը պաշտէին, որ կը համարուէր որդի Արամազդայ (Ճիւղետեր) և Արարուսայ ։ Լուսակիր անունը կը տրուի նմանապէս առաջին աղբստամ ։ հրեշտակին, որ անդունդը զահափիծեցաւ ։ Սա էր ամեն հրեշտակներէն փայլուն ։ բայց ամբարտաւան, որուն վրայ կը խօսուի Միլտոնի Դրափապիլոն մէջ ։

մարկարայի նք ասելէ պէտք ասաց լ'ստուած եղիղի լըս և եղև լըս, որովհետև միայն լ'ստուած Դ խօսքն է լըս և կէանք ։ ճշմարտութիւն և արդարութիւն ։ իսկ մարդոց խօսքը մի խառնուրդ է լուսայ և ստուերի, ճշմարտութեան և մարդութեան ։ Վուտտենբերգեան մամուլին և տպագրութեանը տուելի այս նշանաբանը կը պատշաճի<sup>(\*)</sup> Ի՞նչ օժանդակ ճշմարտութեան Դ ։

Ի՞նչ, երանի թէ մեր ազգային մամուլէն ելած ամեն հրատարակութիւն ճշմարտութեան օժանդակէին, միայն ճշմարտութեան ։

Լըսին թէ ամեն հրատարակուած գրքեր, օրագիրներ, լրագիրներ, յայտարարութիւններ, և առ հասարակ ամեն տեսակ տպագրութիւններ՝ միայն ճշմարտութեան, արդարութեան, իրաւանց և պարտուց կենդանի քարոզներ լինէին, որով Ժողովրդեան մէջն վերնար նախապաշարմունքը, մարդութիւնը, հանրամիտաւ ետութիւնը ու տաղտուկ վիճաբանութիւնը, և թագաւորէր լ'գգին մէջ լըս և սէր և հոգի պարտականութեան ։

Լըսին թէ ամեն հեղինակ, ամեն շարագիր և առ հասարակ ամեն գրաւոր հրապարակախօս՝ սիրէր մամուլի կոչումը և նշանաբանը, որ է ՕՃԱՆԴԱԿԵԼ ԶԸՄԲՏՈՒԹԵԱՆ ։

# ՏՐՏՈՒՆՁ՝ ՍԷՅԵԱԴԻ

Շատ Հայաստան ձայներով լեզվաւն կար չի մնաց,  
 Երբ վերայ վերայ եւ չի դրած ճար չի մնաց,  
 Երբ վերայ բժշկվելոյն՝ երբէք հնար չի մնաց,  
 Գիշեր ցերեկ ողբալով՝ ինձնիւմ ցաւաւ չի մնաց:

Սերթ ընդ բարակ ծածկոյաւ՝ նմա իրաւ ետու շատ:  
 Եւ զայրացեալ ասաց ինձ՝ թէ « խրատներդ է վատ ո  
 Չիմացայ նորա ձեռից՝ գնամ աւելմ գանգատ,  
 Վստն զի ազգի համար՝ մի հատ սատար չի մնաց,

Օտար ազինք իմ խոխտ՝ ձայնս լուծալ արժնացան,  
 Բայց Հայերը ի խոր քուն՝ ընկղմեալ աչք չի բացան:  
 Ոտինները գերեցին՝ նրանց ինքեանք չիմացան,  
 Հայաստանը չի կրած՝ էլ անուգար չի մնաց:

Ինդ թշնամեաց վարուելով՝ անուռակ վարք պատգաւ,  
 Քրիստոնէի հեղաթիւնն՝ հակառակ յոյժ խառնացաւ,  
 Իւր կռուութեան ծածկոյք՝ ստիպաց տալ խոտաւացաւ,  
 Երբ միջին համարեան՝ անարատ քար չի մնաց:

Եւ Սէյեադն եմ ազգասէր՝ տիպան ազգը չունի տէք,  
 Ինչ ազգ որ անտէր լինի՝ ամեն գործն է անվաւեր,  
 Շատ ազինք մեզ հիւր եզեն՝ անկոչ և անհրաւեր,  
 Բայց միջին խեղճ՝ Հայաստանն՝ մաքուր Տաճար չի մնաց:

---

Ընթերցողքը կը շնորհակալ լինի իր արագ յարգանքով և անհրաժեշտ է իւր անհրաժեշտ լինելով մեզ հետ կը քաւին որ Պ. Սէյեադն Սպարտակ և Հայրենիքը յուսադրական երգերով նուագելէն զինք՝  
 այսօր յուսահատական տաղաչափութիւններ կը հրատարակէ: Մենք, որ յուսահատութիւնը իբրեւ  
 թերահաւատութիւն կը ճանաչենք, յորդոր կը կարգանք մեր ծերունի երգչին, որ լանց քաջաւ-  
 րել և իրաւունք ընթերցողները և ոչ թէ յուսահատեցնել:

Շատ ուրախ ենք, որ Աթոռոյս Արժ. միտան Մովսէս վարդապետն Ամսթիւքճեանց միտ-  
 թարական պատասխան շարադրած է Պ. Սէյեադի Տրտնիքն գէմ և անս այս առթիւ խիստ պատեհ  
 կը համարենք՝ թէ Տրտնիքն (որ տպագրուած էր Մեծմուշկի մէջ) և թէ իւր յուսադրական պատաս-  
 խանը միտան գէմ յանդիման հրատարակել Օրագրին մէջ: Ուրիշ անգամ դարձեալ ասած ենք՝ որ  
 ոչ թէ տրտնիքն ու ողբը և ոչ թէ անգործ յոյսն ու միտթարութիւնը, այլ յուսով գործելն է գո-  
 վելի: Եւ ասանք ուրեմն և գործենք:

# ԱՌ ՏՐՏՆԶՈՂՆ

Եստ հայաստան ձայնելով՝ հայու լեզուն չք յոգնիր ,  
 'Դորս վերաց համար դեռ՝ դարմաններ կան յուսարի .  
 Լհա երկու բժիշկ քեզ՝ դատարարակ խմբագիր ,  
 Որոց շնորհուն ազգային՝ բժշկութեան շար մնաց :

'Իսկ խրատներդ ծածկոցաւ՝ ուղղեցիր առ Հայաստան ,  
 Սակայն գիտցիր քարոզներ՝ հրապարակաւ դեռ շատ կան ,  
 Օրս սիրով ընդունին՝ երիտասարդք և նոստան ,  
 Լիս և Լիզի համար՝ սատար ելող շատ մնաց :

'Գուցէ ձայնդ էր անարի՛ զոր Հայաստան չք լսեց .  
 'Կա եռանդատ ձայնելով՝ ռաբախ գիւնք բարեւեց .  
 Խէ ոսրինք գերեցին՝ ըրջաութեամբ ճանաչեց ,  
 Լի Հայութիւնն իր ուխտին՝ առկուն հաստատ միշտ մնաց :

Խէ ոմանց վարքն անառակ , քայց անարատ շատ մնաց ,  
 'Քրիտանէի հեղութիւնն՝ Հայ զաւակին է ստացուած .  
 Ոչ կուտութեան ծածկոցը՝ խոտապաւ տալ ոսրիսց ,  
 Հայուն համար մէն մի քար՝ նուիրական միշտ մնաց :

Լիգաւորն է ազգին տէր . որ չէ քեզ օղէս յուսահատ ,  
 Հայաստանի պաշտպաններ՝ իւր որդիքն են հարազատ .  
 Խէ մոլտ գտան Հայոց մէջ՝ անկող հիւրեր խորամանկ ,  
 Սակայն նոքա կ'անցնին վաղ՝ ամեն տաճար տուր մնաց :

Իսպ մ'ալ կ'ուղղեմ աւելի՛ քեզ ով ծերունկ երգացան ,  
 'Քո յուսահատ խօսքերը՝ Հայու ոգւոյն չեն պատկան .  
 Հայուն յոյսն է հաստատուն՝ գեղաժպիտ ամեն ժամ .  
 Չեռ դու բնաւ մարգարէ՝ որ գիտնաս թէ՛ ինչ մնաց :

Ոչ ապաքէն սխալ էր՝ մարդարէին սահեղ ձայն ,  
 \* Խէ շեղեցան ամեն ոք . ես մնացեալ եմ միայն \* .  
 Իտիյն լսեց 'Նստաւ մէն՝ դեռ բաց 'ի քէն բազումք կան \* ( ? ) .  
 Իւրեմն ո՞ր մեկն ըսեմ քեզ , դեռ պատասխան չտու մնաց :

Մովէս Պ . Ինթիլ-ճիւղի :

Տե՛ր Տե՛ր քննարկարար քո կրտսերքն և քեզանք քո կրթանքն . ես մնայ միայն և ինքրեմ  
 քանն իմ . Սեւ զ'իմ առ իմ պատասխանին Ստաւաւային . Թող ինձ . սեւ , եւթն հազար  
 քո , ոչ ու կրթնային ծուկն քանազո . հով . Ժ . 4 :

# ՀԵՐՈՍՈՒՀԻՆ ԺԱՆ ԴԱՐԳ

ՕՐԼԵԱՆԻ ԱԶՏՈՒԹԵԱՆ ՏՆՐԵԴԱՐԶՐ

Հայրենասէր և կրօնասէր դիւցա-  
գուններու և գիւլցաղնուհիներու ա-  
րարքը պատուել և հռչակել կը նշա-  
նակէ ճանալ հայրենասիրութեան և  
կրօնասիրութեան եռանդը՝ վառել  
և բորբոքել։ Այս գեղեցիկ նպատա-  
կաւ յան դ'Ալքի սիրագործու-  
թեան համառօտ նկարագիրը արժան  
կը համարինք պատկերացնել և իրեւ-  
նամտողութեան չքնաղ տիպարուսում  
նասէր հայ օրիորդներուն նուիրել։

Արդարեւ՝ յան դ'Ալք հայ չէ,  
բայց հայրենասէր է և կրօնասէր, եւ  
սիկ չը գիտէ որ հայրենասիրութիւնը  
և կրօնասիրութիւնը սեպական եր-  
կիր և ազգ չունին, այլ իրել գեղե-  
ցիկ առաքինութիւններ ամեն ազգի  
և ամեն երկրի կը պատշաճին եթէ գոր-  
ծադրուին։ Այս պատճառաւ հայրե-  
նասէրները, թէ արք և թէ կանայք, ա-  
ռանց ցեղի և ազգի խտրութեան ամեն  
տեղ և ամեն ժամանակ յարգուած են  
և կը յարգուին իրենց չքնաղ առաքի-  
նութեամբ, ինչպէս յարգուած է եւ  
հերոսուհին յան դ'Ալքի միայն Վալ-  
դիսիներէն, այլ և ամեն հայրենասի-  
րութեան վեհմեծ թիւնը ճանաչող օ-  
տարներէն։ Եւ միթէ մեր Վարդա-  
նանց գիւլցաղուն նահատակները եւ  
հինգերորդ դարու Հայոց առաքինի  
եւ փառիկասուն տիկնայքը, սրոց յի-  
շատակաւ ամեն հայու սիրտ կը թռ-  
թռայ, չէն յարգուիր և գովուիր օ-  
տարներէն։ Եւ յարգուին և կը գով-  
ուին, այս, վասն զի ինչպէս ասացինք,  
առաքինութիւնը օղջ չունի, և ով որ  
առաքինութեամբ կը նահատակուի,  
ամեն ազգի համար կը նահատակուի  
և յիշատակը ամենուն սիրելի կը լինի։

Սենք վստահ ենք, որ յան դ'Ալքի քա-  
ղաթիւր արդէն սիրալի է պատմագէտ  
հայերուն համար, և այժմ եւս չը պիտի  
գտնուի ընթերցող մի որ նորա պատ-  
մութիւնը կարգայ և չը խանդաղատի։  
Սուրբմի պատմենք։

Եան դ'Ալք, որ Օրլէանի օրիորդ  
եւս կը կուլուի, միջինական աղջկ էր,  
որ ծնաւ Վոմբեմի գիւղի մէջ 1409  
թուականին։ Եւ 18 տարեկան հասա-  
կին մէջ իրեւ հովուուհի, տակա-  
ւին ոչնորներ կ'արածէր։ Այս միջո-  
ցին մի կողմէն ներքին խռովու-  
թիւններ կը յուզէին և միւս կողմէն  
Վագիւսիք արդէն Յիսանասն նուա-  
ճելու վրայ էին։ Եան դ'Ալք իւր հայ-  
րենեաց աղէտներէն սիրտը շարժելով  
գերբնական տեսիլները տեսաւ, որոնք  
զինքը կը պարտաւորէին իւր հայրենի-  
քը ազատելու պաշտօնը յանձն առ-  
նուլ։ Այլաւ իւր գիւղէն և հազարա-  
ւոր վտանգներու մէջէն անցնելով դը-  
նաց Շարլ Լը Գանելու Շինտի փոք-  
րիկ տալաւին մէջ, Վերիայացաւ թա-  
գաւորին և երկար դիմադարձութենէն  
յետոյ համոզեց, որ իւր աստուա-  
ծագրեցիկ պաշտօնին նպատակ հայրե-  
նիքը փրկելու համար։ Ս'եծ ահիւ և  
երկիւղեւ քանի մի զննուսներ յանձ-  
նովեցան յան դ'Ալքին և նա այս փոք-  
րիկ զօրախումբի գլուխն անցնելով,  
յաջողեցաւ ութ աւուր մէջ ազատել  
Օրլէան քաղաքը, որ Յիսանայի թա-  
գաւորի վերջին ապստանարանն էր, և  
պաշարուած էր անգղիական բազմա-  
թիւ զօրաքանակէն։ Այսպէս զօրաց  
վստահութիւնը գրաւելով և բուռն  
հռանդեամբ բորբոքուելով՝ յան դ'  
Ալք առաջնորդեց Շարլին մինչեւ  
Ռեյմս, թշուառաց մէջէն անցնելով  
գրաւեց՝ քանի մի տեղեր, յաղթեց  
Թալլեյին և թագաւորուիւ վերահաւ-  
ատաց թագաւորի օժանմբ, 1439 ին։

Այս սխրագործութենէն զկնի կամեցաւ նա յետ քաշուիլ, յայտնելով որ իւր պաշտօնն լրացած է, բայց թագաւորի թախանձանքով ստիպուեցաւ մնալ նորա մօտ 1430 ին վերստին յարձակեցաւ Ռուդրիկոններու և Լիւդուիգիներու վրայ, որոնք պաշարած էին Վոմպիէն քաղաքը, և առաջիններուն ձեռքը գերի ընկաւ ։ (Յետոյ մատնուեցաւ Լիւդուիգոս ձեռքը և անիւրու տաննի մէջ (որուն նախագահն էր Վոլոն Եպիսկոպոսը), դատաւար տուեցաւ իրբեւ կախարդ և կենդանոյն պրեղաւ Ռուանի մէջ 1431 ին Սայիսի 30 ին ։ Օգոստոսի չէ որ հայրենասիրութիւնը իրբեւ կախարայութիւն դատաւարտուեցաւ, որով հետեւ շատ անգամ ճշմարտութիւնն ու գիտութիւնն եւս դատաւարտուած են իբրեւ յիմարութիւն ։

Սան Գ. Մ. քը նշանաւոր էր ոչ միայն քաղութեամբ, այլև առաքինութեամբ և բարեպաշտութեամբ և իւր դատաւճիւր լոյց անխռով հոգւով, անհամեմատ ծարտարութեամբ պատասխանելով ինչ որ հարկն է ։ Սան Գ. Մ. քը այրուեցաւ փայտակուտի վրայ, բայց Շարլ Լ. ի միջամտութեամբ և Վալիք քստ Վ. Պապի հաւանութե (1436 ին) նորա յիշատակը վերստին մեծարուեցաւ ։ Նորա տոհմը ազնուականաց կարգն անցաւ, և իւր ծննդեան խանձարուր գիւղը ամեն տեսակ հարկէ ազատ հրատարակուեցաւ ։ Իսկ (Օրլէան քաղաքը Սան Գ. Մ. քին անմահ յիշատակին համար սահմանեց հանդիսաւոր կերպիւ տարուէ տարի իւր ազատարարի տարեդարձը տօնել ։ Ի պատիւ Սան Գ. Մ. քին ձիաւոր արձան մի կանգնեցաւ (Օրլէանի մէջ (1855 ին) և արձան մի եւս Վոմպի գիւղի մէջ (1820) իրեն հայրենական տան տեղւոյն վրայ, Սան Գ. Մ. քի սխրագործու-

թիւնը շատ պատմագիրներու և բանաստեղծներու նիւթ եղած են եւ շատերու մէջէն բաւական է միայն Սիլվէի գրած պատմութիւնը և Շիլլէրի աննման ողբերգութիւնը կարգար (Օրլէանի օրիորդի պատմական կենաց վեմ խորհուրդը հասկանալու և պատուասիրելու համար ։

Եւստիք որ (Օրլէան քաղաքը ամեն տարի կը տօնէ իւր ազատութեան տարեդարձը, հռչակելով Սան Գ. Մ. քի յիշատակը, որոյ ձեռամբ նոյն ազատութիւնը կատարուեցաւ ։ Այս տօնը սրբազան հրապուրանք մի ունի, ամեն գաղղիացու համար, որ գիտէ, յարգել կրօնքը և հայրենիքը, Լա առ դարեւ ինչքան քաղցր է այն յիշատակը, որուն մէջ կը տեսնուի, որ բաւականակ ազգ մի կը կանգնի օրիորդի մի ձեռամբ, հովուութի մի կը պաշտպանէ հաւատոյ հանգուանը և կը վրկէ հօտը ։ Մինչդեռ ժողովրդեան հովիւները խոր ի բուն կը խորհան Ս. Սիրտ չը խանդաղատիր և որ միտք չը զմայլիր, երբ կը պատկերացնէ հայրենեաց և կրօնի 18 ամեայ շնաշխարհիկ ազատարար մի, որուն վրայ կը փայլին կուսական անարատութիւն և զինուորական արիւթ թիւն, իմաստունի խորագիրութիւն և մանկան անմեղութիւն, հերոսական աշխոյժ և կանացի փափկասրտութիւն, ողակիզի նշտնակ և մարտիրոսի պսակ, ամեն գեղեցկութիւն հոգւոյ և ամեն փառք կենաց և մահուան ։ ազատարար մի ։ կ'սեսնք, որոյ որդանը անպաճոյճ հիւղ է, բնակարանը՝ փոքրիկ տաղաւար, գերեզմանը կամ սեղանը՝ փայտակոյտ բոցավառ, ծաղկունք մի կողմէն ։ առ իրեն մի կողմէն և արտասուք՝ միւս մէն, իբրեւ ողբակէջ՝ ծաղիկներով պսակուած, իբրեւ հերոսահի՛ դարձնի բողբոս և իբրեւ մարտիրոսահի՛

բոլորով պատկուպն ։

ժան Գ՝ Մարի Կոնր Կամ Օրէա-  
նի ազատութեան տարեգարծը կը կա-  
տարուի խիստ մեծ շքեղութեամբ ։  
Նշեցնելիքն ճարտարապետութիւն կը լին-  
նի և կրօնական ու հայրենասիրական  
հանգանակներ կը կատարուին ։ Մաս-  
տեան՝ մեծ պողոտաներուն վրայ գը-  
րօնները և նախնի զենքերը կը ձափա-  
նին ու կը շոգըտան ։ Վանի ձի նշա-  
նաւոր անդէր ։ Եւր ասանդութիւնը  
պահպանած է ժան Գ՝ Մարի ինչ ինչ  
յիշատակները, խառն թաղութիւնը  
կը համոզմանին ու թախական թաղականե-  
րով և երգերով ։ Մաս թաղութիւնը  
զինուորական նա ազարտներու հըն-  
չումով կը դիմէ գեւա ի մայր եկեղե-  
ցին, ուր քաղաքապետը կը մատուցա-  
նէ եպիսկոպոսին Օրէանի օրհորդի  
յապակէ գրողը, և նա գնելով սեղա-  
նի մօտ՝ կ'օրհնէ թաղութիւնը եւ  
կ'արձարէ ։ Նշեցնելիք օրը քահանայք  
և զօրակներ, երիտասարդք և կու-  
սանք, ծերք և ազաք առհասարակ,  
խաբերով և զենքերով, ծաղիկներով  
և ոստերով, կրօնական երգերով և  
զինուորական նուագներով կը համա-  
խմեն ժան Գ՝ Մարի ձիսու պարձա-  
նին մօտ, ճառք կը կարդան, երգեր  
կը նուագեն, և Նշեցնելիք, Նշեցնելիք և  
Մատուցանան մեծութիւնը կը հաշ-  
կեն ։

Ինչքան սրտաշարժ և կարեւոր էն  
ազգային տօնավարութիւնները, եւ-  
րիշքան գովութեան արժանի է պի-  
սեղանդը, որ կրօնական և հայրենասէր  
նախնեաց յիշատակները կ'արձարէ և  
կը պատուէ ։ Ինչքան փափայլեցի կը  
լինէր և երէ գեթ մեք ազգային օր-  
հորաց վարժարաններուն մէջ սովորու-  
թիւն մտնէր վարժաւոր հանգանակներով  
սրտիկէ մեր հինգերորդ գարա փախ  
կատան և գիւցալնա հի հաց անկանց

յիշատակը ։ որոց իւրաքանչիւրը մէկ  
մէկ ժան Գ՝ Մարի էին հայ հայրենեաց  
և եկեղեցւոյ ազատութեան համար ։  
Մարի պիտի միմիարու էինք, երէ օր  
մի արժանանալինք այն օրինակ ազգա-  
յին հանգանակներու մէջ խօսուած ըն-  
տիր ճառերն կարդալ կամ հրատարա-  
կել, ինչպէս այժմ կը հրատարակենք  
ժան Գ՝ Մարի յիշատակի կամ Օրէա-  
նի ազատութեան տարեգարծի ճառե-  
րէն հետեւեալը, գաղղիարենէ թարգ-  
մաներով ։

Գ

### Պարտնայք

«Մեծամեծ յիշատակները ժողովրդ-  
դաց և քաղաքաց փառաւոր մատան  
դուրսինն է ։ Իսկ նոյն յիշատակնե-  
րուն հաւատարմի մնալն է հայրենա-  
սիրական ուղարկութիւն և պատիւ-  
բախտակ հայրենեաց ։

«Դժմարիտ փառքը գեղարարութե օ-  
ն և գրեթէ շաշարհիկ է, բայց երբ  
կը փայլի և կը շոգըտայ երկրի վրայ և  
արժանաւոր ժողովրդի մէջ, սերուն-  
դաց պատգան է գէպի նոյն փառաց  
լայք գառնալ և ոչ միայն նորա ճա-  
ռանկներով պատկուի, այլ և նորա  
փառաքանին մէջ ջերմանալ և տապա-  
նալ ։ փառն զի մեծամեծ յիշատակնե-  
րա մէջ թէ ջողովուն փառք կայ և  
թէ փայլակայացաւ բաց ։ ար հագի-  
նեցր կը վառէ և կը բարձրէ ։

«Մըս է պատճառն, որ ազգային  
տօնավարութիւնները կը շարժեն և  
կը յուզեն ժողովրդեան փեմ և անդ-  
հաւն զօրութիւնը և յերեւան կը հա-  
նեն ազգի հայեկան կատարելութե-  
նը և մարտը գոյացմանը ։

«Ստանալին ինքնին այս յիշատակ-  
ներու փայլն անցնելով ոչ միայն ջը-  
ջերք և ջը շիւղանքներ հաւատարմի

և երաժշտութեան ժողովրդի վսեմ՝ ընդ քայմունքները, այլ ընդ հակառակն կրնուիրադարձէ և կ'անմահացնէ փառքով և շքեղութեամբ ցեղազարդելով։ Երբ սոյն օրինակ յիշատակներու մէջ հայրենասիրտ թիւնը և կը բնօրը զիրար կը համբուրեն, երբ Լ. Ս. պոռնոյ, փառքը և նախնեաց փառքը կը միանան և իրար հետ կը ձուլուին, երբ տոնախմբութիւնը հայրենասիրտ կան է և միանգամայն կրծնական, ահա այս ժամանակ ամենայն ինչ փառաւոր է և յաղթական, ամենայն ինչ սքանչելի է և սրտաշարժ։

«Լ. Ս. պարունայք, այսպէս է գր. խօսին սերկեան հանդէսը, որ զմեզ կը համախմբէ՝ այսօր տատուածային տաճարի մէջ։

«Երեկ ժողովրդի եւ զօրախումբէ տաջեւ, այն մայր եկեղեցւոյ սեմոց վրայ, գինուարական շփարայից նըււագներով և պրազան երգերով, հին յիշատակն և նոր յիշատակն զիրար սըջապուրեցին, կրծք և հայրենիք զիրար համբուրեցին։ Երանական դրօշմաքաղաքապետի և հոգեւոր հովուապետի ձեռքով սրբազան Սեղանի վրայ դրուեցաւ և դրութեանց թաղաւորին գուհութիւնը մատուցան, իսկ այս փայրկեմունքն ձեռքէ ձեռքի անցաւ և յաւերժացաւ լուսավառ կանթեղներով փայլելով՝ ևր գուշակներ իրենց շողողուն պայծառութեամբ, որ հալիւրամեան տոնախմբութիւնը արդէն սկսեալ է։

Իսկ այժմ, Պարունայք, այն փառքի կամարին տակ, զօրապետ և զօրականք, քահանայք և ժողովուրդ, քաղաքն համբռնէ, սիրտ ի թուեց ոգեւադրած, դէմ յանդիման կը նկատեն գեղեցիկ յիշատակ մի, կը պատկերացնեն վեհ պատկեր մի, որ գոյցեւ թեւատարած կը նայի մեր վրայ և կը խնդալի։

«Ինչ է արդեօք այս յիշատակը, որ շորս գտրեն ի վեր՝ ամեն տարի կը նորոգի այն աւուր մէջ և կը յաւգէ։ (Որքանի բնակչաց եւանդը, գործը և խանդը, զոր չի կորսոց երբեք մեզմէ կամ նուազեցնել ժամանակի ճակիչ զօրութիւնը։ Եւս յիշատակն է, Պարունայք, (Որքանի օրհորդի սնմահ յիշատակը, որով փառքը ոյցեւութեան եկաւ ձեռք քաղաքին և քաղաքը տեսաւ, այն հոգեւոր պատերազմներէն մեկը, որոնք բանաստեղծի ատածին պէս, դուրսց ի դարս յաւիտենական խօսակցութեան նիւթ կը գաւնան ապագայ սերնդոց համար։ Եւս յիշատակն է այն սրանչելի ազատութեան յիշատակը, որով ազատեցաւ քաղաքը և հայրենիքը, ազատեցաւ այն գիւղացիներ հոյ ձեւամբ, որ պատմութեան ամեն պատկերներէն շնորհագիծն է, պատկեր ամբիւր և անարատ, պատկեր անհամեմատ գեղեցիկ, պատկեր սուրբ, որոտպրտ և փառաւոր։ Եւս այս տղաւութիւնը կատարուեցաւ, Պարունայք, այն Լալի յատուկ և յայրենի գործակցութեամբ, առանց որոյ մեծ իրողութիւն մի չի կատարուիր երկրիս վրայ։

«... Եւստեալ է ժողովրդեան Լուրարիչը և նա է որ կիշիւն և կը նախախնամէ, և որչափ որ Եւստեալ մատուց, սովորաբար ծածկուած է պատմական, օրէնքներու կանոնաւոր խաղերու մէջ, սակայն երբեմն յանկարծական փալատականութիւն կ'փայլատակի, մարդկանց ամեն խորհրդները կը զփոթէ, ամեն կարծիքները կը տապալէ, և այժմ պիտի անակնկալեց և վախճան կուտայ իրերուն, որ յանկարծ կըսվափին և կը տեսնեն, որ իրենք իրար ինքնախան չեն, այլ կայ գերագոյն Տէր մի, որ կ'առաջնորդէ մարդկութեան, և կ'ուղղէ աշխարհի օրէնքները։

«Ի՞նչ կայ արդեօք մեր մէջ, Պարոնայք, որ տեսած չը լինի և կամ չը տեսնէ։ Ըստուծոյ հօր ազդեցութիւնը հին և նոր պատմութեան մէջ, և ո՞վ կայ որ սաստուածային մասանկ ստուէրն տեսնելէն և ճանաչելէն յետոյ՝ չաղաղակէ զուարճախառն երկիրդիւ»  
«Ի՞նչ! մասն Ըստուծոյ ո՞»

«Ըստուած կը միջամտէ մարդկային պատմութեան. բայց կը գործէ մարդկանց ձեռքով, կ'ազդէ մարդկանց սրբ. տին, կը բազմապատկէ նոցա զօրութիւնը, և այսպէս երկու ճառագայթք իրար հետ կը միանան, երկնաւոր և երկրաւոր, և ինչ անձի վրայ որ կը ճառագայթին և կը միանան, իսկոյն կ'ոգեւորեն, կը վառեն և մի փառաւոր պսակ կը կաղմեն նորա գլխոյն վրայ»

«Եւդ, Պարոնայք, լսանք զԼէք օրիորդը աւելի լաւ ճանաչելու համար և արդարն Ըստուած ՚ի բոլոր սրտէ փառաւորելու համար, պէտք է որ դիտենք, պէտք է որ զննենք ( ) Ըլէանի անմահ օրիորդի սրտի խորքը, որ վառեցաւ աստուածային ներշնչութեամբ կրօնքի և հայրենեաց պաշտպանութիւն համար»  
Պէտք է զննենք թէ Բնչոյէս հետպէտէ փայլեցան, զօրացան և վրասեմացան նորա արժանայիշատակ պատմութեան երեք գլխաւոր վայրկեանները՝ նորա քաղցր և շնորհատեսիլ արշալոյսը, նորա փայլուն և պայծառ միջօրէն և նորա ասպարիզի վաղահաս երեկոյն, յորում փայլակը փայլատակեց շունթը հարուածեց և փառաց ասպարեզը պսակեց։ Եւրո այս ամենը զննենք, Պարոնայք, ակներեւ կը տեսնենք՝ ինչ որ ամենագեղեցիկ է աշխարհիս վրայ, ինչ որ մեծ է մարդկային գործոց մէջ, ինչ որ ճշմարիտ աղբիւր է մեծամեծ իրաց, կարճ ասեմ կը տեսնենք հոգին, հոգին, լսանք Լէքի։

«Ի՞նչ այսպէս հայրենասէր եւ աստուածասէր օրիորդի պատմութեան մէջ մարդկային գործողութեան տակ աստուածային հօր մատը նշմարելով՝ կարող ենք այս շահաւէտ դասը քաղել»  
«Ի տեսանէ եղեւ այս, և է սքանչելի յաջ մեր»

«Ըստուած իմ, տուր զօրութիւն բանից իմոց ո՞»



... Խմբագիր Սիօն ազգագուհանգիսի»

Իրիստ կարեւոր կը համարիմ Լմերիկա գտնելու մեր ազգայնոց վերայ այն երկտող տեղեկութիւնս Սիօնի միջոցաւ առ յարգի ազգայինս ուղղել թէ վարձք և թէ օգուտ ինձ և նոցա համարելով. ուստի բարեհաճեցէք ընդունել և հրատարակել։

Լմերիկայի Հայոց Վեհալը

... Խմբագիր»

Նամակիս սկիզբէն նախ պատեհ կը համարիմ յիշել տաճական այն առածը որ կըսէ՝ «Ոգայան քառուղին չէր լսել ինչէր»<sup>(\*)</sup>։ Եւր Լմերիկայի նշանաւոր իրեօք քաղաքը մտայ, նախ՝ Հայերը բնառեցի. հոս գրեթէ 20-25 հայ տեսի, եթէ հարկ ըլլայ ուրոյն ուրոյն ասոնց վիճակին վրայօք տեղեկութիւն տալ կարծեմ թէ բաւական էջեր լեցնելու ենք։

Սոյն խմբին մէջ հաղիւ թէ երեք կամ չորս հոգին ինքզինքնին անկախապէս կը հոգան, իսկ միւսները ամենայնեօրն թշուառ վիճակի մէջ չըսեմ՝ այլ հաղիւ հաղ իրենց օրապահիկը ծարելու վիճակին մէջ կը գտնուին։ Լսոնց գրեթէ ամենն ալ տարբեր նշանակաւ հոս եկած են, սակայն և ոչ

(\*) Թմբակին մայր հեռուն քաղցր կուգայ։

մէկը գեռ չէ յաջողած իր բռն նպատակին հասնելու, և այնպիսի ամիսնաստորին գործառնութեանց մէջ կը գտնուին՝ որ եթէ Տաճկաստան ըլլար, թերեւս քովէն անցած ժամանակը պիտի ծաղըէին ։

Այս պարոնները, որոնք հասակաւ 30 էն վեր չեն, բացի Պ. Սկանեա նէն, իրենք ալ իւրեանց վիճակէն արժգոհ, բայց ինչ օգուտ մէկ անգամ ինկեր են, որը՝ ութը, որը՝ տասը եւ որը տասն և հինգ տարիէ ՚ի վեր իրենց ծաղիկ հասակը ապարդիւն այս օտար երկրին մէջ կը մաշցնեն ։

